

75329

Григорьевка

Чет 5 фаз орнамент

келесеңшілдер атасы

321
4-83

15 JAN 2010

ՀԱՅ ՏԵՂԱՓ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Գրադարան «Աշխատաւորի»-ի № 12.

Գ. Ն. ԿՐՐԺՆԻՑԿԻ

Ի՞նՉ Է ՖԵՇԵՐԱՏԻՒ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Առև. աղաս թարգմ Իրազեկ.

Է 20 ԿՈՊ.

321
4-83

Խճիքիս
«Աշխատաւոր»
1918

24.05.2013

15329

321

4 - 83

26 SEP 2006

Գ. Ն. ԿՐՈՋԵՒցկի


ԽԱՉԵ ՊԵԳԵՐԱՑԻԼ ՀԵՆՔԱՎԵՏՈՒԹԻՒՆԸ

(Ռուսական Ֆեդերացիա)

Փոթորկայոյդ ժամանակ ենք ապօռում: Թնդանօթների անլուկի որոտի և համաշխարհային հրդեհի բասորագոյն լոյսի տակ կազմակերպում է երիտասարդ ռուսական պետութիւնը նոր հիմունքներով: Դժւարին է այդ կազմակերպումը: Դժւարին նրանով, որ Ռուսաստանի շեմքին կանգնած է զօրեղ թշնամին, որն այնպէս ատում է մեր ազատութիւնը:

Եւ ահա այսպիսի ծանր պայմաններում մենք պիտի կոփենք մեր մանուկ երջանկութիւնը, հարթենք կեանքի նոր ուղիներ:

Մինչև այժմ մեր ողեր դրւած նղիքներց ամենուժաբն այն էլ,



1287-93

1287

թէ ինչ պետական ձև պիտի ունենայ
Ռուսաստանը—առաջւայ նման միաշ-
պետութիւն, թէ՞ հանրապետութիւն:

Այսօր արդէն այս հարցը չի կարող
երկու պատասխան ունենալ. Սահմա-
նագիր ժողովը արդէն որոշել է հան-
րապետութիւն, ոչ ազնւական, բուր-
ժուական, այլ ուամկավար, այսինքն՝
ժողովրդական հանրապետութիւն, որի
մէջ իշխանութիւնը պատկանում է ոչ
թէ այս կամ այն գասակարդին, այլ
ամրող իրաւազօր ժողովրդին:

Թուում է, թէ հարցը հենց սրանով
էլ սպառում է.—ոամկավար հանրա-
պետութիւն ու վերջացաւ, վնաց : Սա-
կայն այդպէս չէ: Հարցի դժւարու-
թիւնները հենց այստեղ են թագւած:
Չէ որ սուսական պետութեան կազմի
մէջ մտնում է ոչ միայն սուս ժողո-
վուրդը, այլ և մի ամրող շարք ուրիշ
ազգեր—մօլորոսներ, ֆիններ, հայեր,
վրացիներ և այլ բազմաթիւ. ժողո-
վուրդներ, որոնց թիւը ներկայումս
հարէւրից աւելի են համարում: Այդ

ըոլոր ժողովուրդներն իրարից բոլորու-
վին տարբեր են թէ իրենց բնաւորու-
թեամբ, թէ հաղախակրութեան աստի-
ճանով և թէ կենցաղով: Դրա համար
էլ չի կարելի նրանց բոլորին ի մի
խանել, այլ հարկաւոր է իւրախանչիրին
իրաւունք տալ ապրելու այնպէս, ինչպէս
ինքն և կամենում (ազգային ինքնորո-
շում): Եթէ ազատութիւն ենք տալիս
սահմատ-քաղաքացիներին, աւելի շուտ
ազատութիւն պիտի տանք հակ տոան-
ձին ժողովուրդներին: Եւ որովհետեւ
այդ բոլոր ժողովուրդներն այնուամեռ
նայնիւ կազմում են մեկ ուսական
պետութիւն, ապա նրանք պէտք է ի-
րար հետ մի սերտ միութիւն կազմեն և
հանդիսանան մի ամբողջութեան ինք-
նուրոյն մասերը:

Այդպիսի միութիւնն ընդունւած է
կոչել ֆեդերացիա, ժողովուրդների
գաշնակցութիւն:

Սակայն չպէտք է այս գաշնակցու-
թիւնը շփոթել այն գաշնակցութեան
հետ, որ Ռուսաստանը ներկայումն

կնքած ունի, օրինակ, Ֆրանսիայի և Անգլիայի հետ Այդ դաշնակցութիւնը միայն պատերազմական բնոյթ ունի, դաշնակիցները պարտաւոր են ըստ կարելոյն օգնել իրար: Բայց հենց որ վերջացաւ պատերազմը, նրանցից իւրաքանչիւրը կապրի առանձին: Իսկ Փեղերացիան այդպէս չէ. Փեղերացիան մետական դաշնակցութիւն է մի պետութիւն կազմող փոքր ժողովուրդների կամ փոքրամասերի:

Արդ՝ Բնոչպէս և Բնչ նպատակով է կազմում ժողովուրդների այդպիսի դաշնակցութիւնը. Բնչ բանի համար է հարկաւոր նա և ինչ միտք ունի:

Դաշնակցութիւնը կազմում է երկու ճանապարհով. —

1. Ամենքին յայտնի է հին ճշմարտութիւնը, թէ միութիւնն ոյժ է: Եւ ահա հաւատարիմ այդ սկզբունքին, փորիկ ցեղերն ու ժողովուրդները միանում և միծ միութիւններ են կազմում կամ թշնամիներից պաշտպանուելու, կամ առևտը հեշտութեան և

կամ այլ նպատակների համար, լաւ ըմբռնելով, որ միասին աւելի դիւրին է աշխատել ու ապրել, քան ջոկ-ջոկ: Այդ ճանապարհով են առաջացել օրինակ, Զվիցերական հանրապետութիւնը, Հիւս. Ամերիկայի Միացեալ Նահանգները և Հար. Ամերիկեան հանրապետութիւնները որոնք ըոլորն էլ զվարովին ուամկավար պետութիւններ են:

2. Երրեմն էլ, ընդհակառակը, պատահում է, որ մի պետութեան առանձին մասերը — տարբեր իրենց բընակութեան ծագումով, մտաւոր զարգացումով, սովորութիւններով, բարքերով ու կենցաղով — ձգտում են ինքնուրոյն զարգացման: Նրանց համար տանելի չէ տիրող ժողովուրդի ճնշումը և նրանք արդարացիօրէն ուզում են ազատել, բայց և միևնոյն ժամանակ ցանկանալով մնալ որպէս մասեր իրենց միացնող պետութեան: Այդպէս է երկրի զրութիւնը, օրինակ, Անգլիայում, ուր ինքնավարութեան են ձգտում

Հնդկաստանը, Աւստրալիան, Կանադան
և այլն, որոնցից մի քանիսն արդէն
ստացել են այդ ինքնավարութիւնը,
իսկ միւսները՝ տակաւին ոչ, ինչպէս,
օրինակ, Իրլանգիան:

Ճիշտ այդպէս է գրութիւնը և Ռու-
սաստանում: Մի չե այժմ հին կառա-
վարութիւնը բոլոր միջոցներով ընկ-
ծում և ճնշում էր բոլոր «այլազ-
գիւերին», այսինքն՝ ռուսական պետու-
թեան մէջ մասնող ոչ-ռուսներին, մաս-
նաւորապէս լիներին, ուկրայինցին ո-
րին, հրէաներին և ֆիններին: Արգե-
լում էր նրանց խօսել և զրել իրենց
մայրենի լեզով: մտածել իրենց ուզած
ձնով: «Անհնազանդներին» աքսորում
էր, բանտերում տանջում և պատժում:

Սակայն ընկաւ հին կառավարու-
թիւնը: Ռուսական հորիզոնում փայ-
լող ազատութիւնը վառեց և այլազգի-
ների համար: Այժմ նրանք էլ կարող
են ազատ խօսել ապրել մտածել
զգալ իրենց կամեցածի պէս: Բայց և
այնպէս նրանք ամենքը խռութագանում

և բացի այն, որ իրենք ֆինն են,
և այ կամ վրացի, միւսոյն ժամանակ
նաև մեծ Ռուսաստանի բարձրացիներ են:
Եւ ահա հարց է ծագում, ի՞նչպէս
միացնել նրանց ռուսական ընդարձակ
հանրապետութեան մէջ, միացնել այն-
պէս, որ չխախտեն նրանց ազգա ին-
ցեղական իրաւունքները:

Տեսանք արգէն, որ հանրապետու-
թիւնը կարող է լինել՝ կամ ֆեդերա-
տիւ և կամ ռուստար ֆեդերացիա+
դա գաշնակցութիւն է ազատ ժո-
ղովուրդների, ըստ որում զաշնակ-
ցութեան մէջ մտնող ամեն մի ժո-
ղովուրդ վա ելում է որոշ աստիճա-
նի ինքնավարութիւն (աւտոնոմիա):
Ընդհակառակը, ռուստար հանրապե-
տութեան մէջ (օրինակ՝ Ֆրանսիայում)
պետութեան բոլոր մասերը կառավար-
ում են միատեսակ և ինքնավարու-
թիւն չեն վայելում:

Այդպէս, օրինակ, Ֆրանսիայի մի
բաւական խոշոր մասը (հարաւը) բռնող
պրօվանսալցիք ոչ մի ինքնավարու-

թիւն չեն վայելում և պարտաւոր են
ապրել տյնպէս, ինչպէս այդ ցանկա-
նում են տիրող ֆրանսիացիք: Ճիշտ է,
Նրանք էլ նոյնպիսի քաղաքացիներ են
ֆրանսիական հանրապետութեան, ինչ-
պէս և ֆրանսիացիք, նրանք էլ վայե-
լում են բոլոր իրաւունքները ֆրան-
սիացիներին հաւասար, բայց չէ որ
նրանք, յամենայն դէպս ֆրանսիացի-
ներ չեն և կկամնատ ին իրենց մօտ, ի-
բենց հարազատ երկրի սահմաններում
ապրել իրենց ուղածի պէս և ոչ ֆրան-
սիացոց ցուցմունքներով:

Նոյնն է Ռուսաստանում: Վերցնենք,
օրինակի համար, մալօրօսամերին: Նրանք
պատրաստ են վճարել հարկեր
հաւասար վելիկորսուսներին, պատրաստ
են վերջիններիս հետ համահաւասար
տանել զինորական և միւս պետական
ծառայութիւնները, բայց իրենց մօտ,
իբենց հարազատ երկրում, Ռւկրայնա-
յում, մալօրօսսը կամենում է ինսել
ինքն իրեն և ապրել իր ողածին պէտ
իսկ այդ, իհարկէ, հնարաւոր է մշտ-

միայն ֆեդերատիւ և ոչ թէ ունիտար
հանրապետութեան մէջ, ուր առանձին
ժողովուրդները չունին իրաւունք ինք-
նուրոյն և ինքնանկախ զարգանալու:
Մենք, որ ի լուր ամենքի, ի լուր ամ-
բողջ աշխարհի յայտարարել ենք թէ
ընդունում ենք բոլոր ժողովուրդների
ազգային ինքնորոշման իրաւունքը, ան-
կախ նրանց թւից, կարող ենք Ռուսաս-
տանում երկակայիլ միայն և միայն ֆե-
դերատիւ հանրապետութիւն, որովհետև
միայն նաև կարող է իր մէջ մասնող ա-
ռանձին մասերի ինքնավարութիւնն
ապահովնալ:

Ֆեդերատիւ և ունիտար պետութիւն-
ների տարբերութիւնն աւելի պայծառ և
ակներե ընդգծելու համար, համեմա-
տենք Ժամանակակից երկու պետու-
թիւններ, մի ֆեդեր տիւ Զիցերիա
և մի ունիտար Ռուսորիա:

Ֆեդերատիւ Զիցերական հանրա-
պետութիւնը կազմւած է 22 փոքրիկ
հանրապետութիւններից, որոնք կան-
տօն են կոչւում: Խւրաքանչիւր կան-

տօնը, անկախ իր մեծութիւնից, վայեւ
լում է միւսներին հաւասար իրաւունքը
ներ, թէև միւսները նրանից թէկուզ
10 անգամ մեծ լիսին. Իւրաքանչիւր
կանոննը - իրկին ընդգծում ենք, ան-
կախ իր աեծութիւնից -ուղարկում է
երկու ներկայացուցիչ կամ պատգա-
մաւոր նահանգների կամ պետութիւն-
ների խորհուրդը: Այսպէս օրինակ՝ Ռւ-
բիի փորբիկ կանոնն իր շուրջ 20
հազար բնակչով ուղարկում է խոր-
հուրդ նոյն բանագամաւոր - այսինքն
երկու - ինչքան և Ցիւրիխը կամ Եեր-
նը, որոնցից իւրաքանչիւրն ունի մօտ
կէս միլիոն բնակիչ: Բոլոր զորձերը
վճռում են միասին և գաշնակցու-
թեան բոլոր Նոդանները (կամ գաշ-
նակից ժողովուրդները) օգտում են
կատարելապէս հաւասար ձայնով: Ռւ-
բենն, այստեղ ոչ մի ժողովուրդ ոչ
կարող է ճնշել միւսներին, ոչ էլ ինրը
կարող է ճնշել միւսներից: Եւ մենք
իսկապէս տես ում ենք, որ Զիցե-
րիայում կողք-կողքի և հաշտ ապրում

են երեք տարբեր ազգութիւններ - գեր-
մանաց ք. ֆրանսիացիք և իտալացիք,
տարբեր ոչ միայն իրենց ծագումով,
այլ և դաւանութեամբ:

Իրենց ներքին գործերում կանոն-
ները բոլորովին ազատ են. տեղական
բոլոր խնդիրները վճռում են իրենք,
իրենց ուղարկութիւնն ժամանակ,
նրանք բոլորն իւրաք հաւասար են, ապ-
րում են, ինչպէս ուղում են, բայց
կազմելով մէկ և անբաժանելի ամբող-
ջութիւն:

Ունիտար պետութեան օրինակ կարող
է ծառայել Աւտորօ Հունգարիան: Այդ-
տեղ ապրում են և գերմանացիք, և
հունգարացիք, և սլավոններ և իտա-
լացիք: Թէև աւտորիական սահմանա-
դրութեան Հ5-ի համաձայն «Բոլոր Ժո-
ղովուրդներն իրաւահաւասար են»,
բայց իրօք, զործականում, այդ ժողո-
վուրդները և ոչ մի ինքնուրոյնութիւն
չունին: Կան արօնեալներ - գերմանա-
ցիք, հունգարացիք և լեհներ, որոնք

միահամուս ուժերով ճգմում և քամուս
են միւս ժողովուրդների հիւթր:

Եւ այդ հասկանալի է: Ունիտար
պետութեան անհրաժեշտ յատկա իշն
է կազմուս՝ կենթռնացման սիստեմի
գործադրութիւնը, այսինքն՝ ունիտար
պետութեան մէջ կառավարելու իշ՝ ա-
նութիւնը տրում է ոչ թէ առանձին
շրջաններին, այլ մի զիսաւոր ցեղի
կամ կենտրոնի, որը և կառավարում
է երկիրն իր քահանձոյրի համաձայն,
ի նկատի ունենալով բացասապէս իր
շահերը, իսկ միւս ժողովուրդների կամ
շրջանների ցանկութիւններն ու կեն-
սական պահանջներն ամենելին հաշի
չառնելով: Ունիտար պետութեան մէջ
անխուսափելիորէն ուսնահարում են
բոլլերի իրաւունքները, այն ինչ ֆեդերա-
տիւ պետութեան մէջ, լնդհակառակը,
թագաւորում է միջազգային արդա-
րութեան և կատարեալ իրաւահաւա-
սարութեան սկզբունքը այն բոլոր ցե-
ղերի ու ժողովրդների, որոնք կազմում
են տւեալ պետութիւնը:

Բոլորովին սխալմամբ է Դերմանիան
ֆեդերատիւ պետութիւն համարուում
Նա ֆեդերատիւ է միայն անւանապէս:
Ճիշտ է, նրա առանձին մասերը վայե-
լում են որոշ ինքնավարութիւն, մինչեւ
անգամ ունին իրենց առանձին միա-
պետը, բայց և այդ առեւելոյք արդա-
րութեամբ հանդերձ, տխուր է նրանց
վիճակը, որովհետեւ նրանք ոչ այլ ինչ
են, եթէ ոչ կամակատարները Պրուս-
սիայի, որ ուղղութիւն է տալիս ամ-
բողջ Դերմանիային:

Մինչզեռ աղատասէր Փեդերատիւ
Զւիցերիայում բոլոր դաշնակից պե-
տութիւնները (կանտօնները) կատարե-
լապէս իրաւահաւասար են, Գերմա-
նիայում Պրուսիան վարուում է մնա-
ցած պետութիւնների հետ՝ ինչպէս իր
սեպհական տանը Տեսանք արդէն, որ
Զւիցերիայում իւրաքանչիւր կանան,
անկախ իր միծութիւնից, ուղարկաւմ
է Դաշնակցական խորհուրդ երկու և ը-
կայացուցիչ, ան ինչ Գերմանիայուս
մեծ պետութիւններն ուղարկում են


Դաշնակցական խորհուրդ աւելի պատգամասորներ, քան մանրերը Գերմանական Դաշնակցական խորհուրդի 58 պատգամաւորնենից 20 տալիս է Պրուսիան, այսինքն մէկ երրորդից աւելի: Այսպէս որ, բաւական է միւսներից -23 ձայն էլ ունենալ, և պրուսացիների մեծամասնութիւնն ապահովւած է: Գերմանական միւս պետութիւններն ուղարկում են 3-4 պատգամաւոր. կան պետութիւններ էլ, որոնք ուղարկում են միայն մէկ պատգամաւոր: Կամ իրաւահաւասարութիւն է:

Դրա հետ միասին, պրուսական պատգամաւորները վայելում են այնպիսի արտօնութիւններ, որ չունեն կայսրութեան միւս պետութիւնները Այդ պատճողի, պետական գործերը վճռելու ժամանակ, միշտ էլ ապահովւած է Պրուսիայի մեծամասնութիւնը. Պրուսիան ինչ վճռեց, այն էլ վճռւած է է բոլորի համար, մինչեւ իսկ բողոքելն անօգուտ է: Միապետները համարեա վասսալներն են պրուսական կայզերի

և պետական հարցերի լուծման մէջ՝ անզօր: Ամենքին յայտնի է, օրինակ, որ Բաւարիան այդ պատերազմը չէր ուզում, բայց Պրուսիան կամեցաւ և պատերազմն սկսւեց:

Այսպէս ուրեմն, ունիտար պետութեան մէջ չկայ արդարութիւն, բոլոր ժողովուրդներն իրաւահաւասար չեն, կան ճնշողներ, կան և ճնշւածներ: Ճետեաբար, յանուն ընդհանութիւն ազատութեան, յանուն բոլոր ժաղավորդների հաւասարութեան և եզրայրութեան, մենք պէտքէ է բոլոր ուժերով մաքառենք և աշխատենք, որ Ռուսաստանում հաստատի ֆնդերատիւ և ոչ ունիտար հանրապետութիւն: Ողբալի վիճակը փթած Աւստրիայի, ուր միացեալ ժողովուրդներն ապրում են ոչ լաւ, քան շունչն ու կատուն, և սարսափը գերմանական իմպերիալիզմի պերճախօս ապացոյց են այն բանի, թէ ինչ հետևանքներ կարող է ունենալ կառավարութեան ունիտար ձեզ...

Այս մէկ Բայց դեռ շարունակենք:



Յայտնի է, որ իրրեւ նշանաբան մենք յայտարարել ենք ռամկավար հանրապետութեան գաղափարը։ Արդ՝ անխուսափելիօրէն հարց է ծագում—որ ձեր կառավարութիւնն է ապահովամ հանրապետութեան ռամկավարութիւնը—ունիտմր, (Միացեալ) թէ ֆեդերատիւ (գաշնակցական)։

Ունիտար ձեր իշխանութիւնը տառիս է մի ցեղի կամ մի զառակարգի ձեռքը և դրանով ներկայանում է լուրջ սպանալիք գեմոկրատիայի համար, որ միշտ եղել է պաշտպան միջազգային արդ սրութեան սկզբունքի և ինտերնացիոնալի, բոլոր ժաղովուրդների միացման։ Հետեւը զարդարած պետք է գոյց է առիս, որ միայն Ֆեդերալ պետքիւններն են ամենադեմոկրատ—օրինակ, չուս։ Ամերիկայի Միացեալ Նահանգները և Զեփերիան, այն ինչ ունիտար երանիան բուրժուական երկիր եւ Ռուսիան, ևթէ մեզ համար թան-

կաղին և մեր սրտիկ մօտիկ է դեմոկրատիզմի գաղափարը, մենք պիտի անսպայման ջանանք ապահովել արդէն ընդունած ֆեդերատիւ կազմը թուսատանում։

Երրորդ՝ ունիտարիզմը, որպէս տեսութիւն մի ժողովրդի գերիշխանութեան միւսների վերաբերմամբ, մօտենում է գերմանական իմպերիալիզմին և անխուսափելի կրապով կապւած է զանազան «նւաճողական ձըգտումների» հետ, որպիսի երկոյթը մենք տեսնում ենք մեր թշնամի երկիրներում։ Գերմանիայում և Աւստրիայում։ Իրենց նւաճողական ձգտումներն իրականացնելու համար, այդպետութիւններն սովուած են շարունակ զօրեղացնել իրենց սպառագինումը, որի արդիւնքն է հանգիստանում ներկայ հրեշտակին, իր նմանը չունեցող մարդկային սպանագանոցը... Եյն ինչ ֆեդերատիւ սկսութիւնները չունեն նւաճողական, «օտար կտորներ» յափըշտակելու ձգտումներ։ Նրանց ըն-

դարձակումը բոլորովին այլ ճանաւարիաներով է կառարուում—խաղաղ և սիրայօժար միացման ճանապարհով։ Իրենց ազատ կամքով շարունակ նորանոր անդամներ են միանում նրանց։ Դրա համար էլ նրանց հարկաւոր չեն հոկայական և ժողովրդական խոչոք գումարներ կլանող ձեռնարկութիւններ։ Ֆեղերատիւ պետութիւնների մեծ մասը նոյն իսկ չունի մշտական գորք—Զւիցերիա։ Միացեալ նահանգներ։ Նրանց ունեցած զարքի նւազագոյն քանակութիւնը ծառայում է ոչ թէ արձակումներ գործելու, այլ երկիրը արտաքին ապառնալիքներից պատճանելու համար։ Ահա թէ ինչու ֆեղերալիզմը գերեզմանն է միլիտարիզմի։ Ֆեղերալիզմ և միլիտարիզմ—սրանք հակումնեայ գաղափարներ են և իրար մօտենալ երբէք չեն կարող։

Անհրաժեշտ է ընդգծել մի հանգամանք ևս յօդուտ Ռուսաստանի ֆեղերատիւ հանրապետութեան։ Դա հետեւան է։—Ռուսական ֆեղերացիա-

յի հաստատումով կը լուծւեն այն երկու ցաւոս հարցերը, որոնք մինչեւ այժմ ահազին դժբախտութիւնների պատճառ են հանդիսացել—Սլաւոնական և Բալկաննեան (Արևելիան) հարցերը։

Խնդիրը երկու խօսքով հետեւանէ։—Ռուսաստանն ի հսուց անտի զգում և զիտակցում է, որ ինքը կապրած է մասցած ոլաւօնականութեան հետ, մասնաւորապէս հարաւաչին սլաւոնների՝ սկըր «ախրաբների» և բուլգարների հետ։ Ռուս մարդիկ միշտ ջերմացին արձագանքել են տաճիկ լծի տակ տառապող արեան և կրօնի եղբայրների հառաջանքներին։ Եւ հին կառավարութիւնը կարողացաւ օգտագործել ռուսական այդ անկեղծ զգացմունքը իր նպատակների օգտին։ Ռուսական արիւնով հեղնդելով Բալկանները՝ նա ազատեց Սկըրիան և Բուլգարիան։ Բայց զրա հետ միասին նա որոշեց իր «ունիտար» ձեռքը դնել Բուլգարիայի վրայ և բանը հասցընց

այնտեղ, որ Ռուսաստանի համար առ զօթող բոլգարները թշնամացն իրենց մեծ եղայրների հետ:

Ռուսական բարձրագոյն իշխանութեան ներքոյ սլաւօնական մէկ միութիւն կազմելու գաղափարը ծաւալւած էր ոչ միա ն Ռուսաստանում—գեղարիխաներ, Կոստոմարով, հրապարակախօս Մ. Դրագոմանով այլ և իրենց՝ սլաւօնների մէջ: Սական նըսրանց շատ էր վախեցնում ռուսական տիրապետութեան տակ ջախջախւած կենաստանի ճակատագիլը, այն կենաստանի, որի վերաբերմամբ ռուսական կառավարութիւնը «ռուսացման» գորեղ քաղաքականութեան էր հետեւում: Մի կողմից ձգտելով միանալ դաւան կից Ռուսաստանին, միւտ կողմից սլաւօնները վախենում էին, թէ մի գուցէ ռուսական կառավարութիւնը, յանուն իր «ռուսիտար» ձգառանքների, զրկի նըսրանց ինքնուրոյնութեան այն սաւերից, որ վասելում էին նըսրանք Աւստրօ-Հունգարիայում:

Այդ պատճառով էլ համասլաւօնական միութեան գաղափարը—րոլոր սլաւօն ցեղերի ֆեղերացիան—թւում էր այս ժամանակ մի անիրականալի ցնորք, որովհետև նրա իրականացման համար հարկաւոր պիտի լինէր զոհարերել ազգութիւնը: Սական այժմ, երբ Ռուսաստանում ծնունդ է առնում ֆեղերացիւր հանրապետութիւնը, սլաւօնները սիրով կմտնեն նրա կազմի մէջ որպէս ինքնուրոյն, լան-ինքավար, ըաղկ ցուցիչ մասեր:

Կարող է պատահել, որ ռուսական ֆեղերացիային միանայ նաև կենաստանը, թէկուզ զուտ տնտեսական դրդիչներով, քանի որ նա չի ունենալու ազատ ճանապարհ դէպի ծովը և, ուշեմն, ստիպւած պիտի լինի իր առետուրն անել մի ուրիշ պետութեան միջոցով: Նրա միացումը ռուսական ֆեղերացիւր հանրապետութեանը կտայ նըսրան ահագին օգուտներ այդ տեսակէտից՝ միհնոյն ժամանակ նաև ապահովելով նրա քաղաքական և տնտե-

տական անկախութիւնը: Եւ կատարած ածմի քանի փաստերն ասում են, որ նա արդէն պատրաստ է քայլեր անել այդ ուղղութեամբ:

Աւելորդ չի լինի այստեղ նկատել, որ Նիկոլայ Ա-ի կառավարութեան դըժքախտ ճախատագիրն «այլազգիներին» ճնշող իր քաղաքականութեամբ շատ է վախիցրել և Աւստրիային: Աւստրիական կառավարութիւնը պատրաստ է մեծ զիջումներ անելու և մինչև անգամ սկսել է իր շոյիչ խաղերը երկրում բնակւող «այլազգիների» հետ: Կամենում են աւստրիական սլատօններին հաւասարացնել զերմանացիներին և հունգարներին, աւստրիական բոլոր ժողովուրդները դարձնել իրաւահաւասար: Մատածում են Աւստրօ-Հունգարական «երկամէկ» միավետութիւնից ստեծել մի «եռամէկ» միավետութիւն՝ Աւստրօ-Հունգարօ-Սլաւիա՝ ադ «Սլաւոն» պետութեան զլուխ կարգելով Զերնօգօրական արքայորդուն, որ

իր հայրենիքը վաճառեց Աւստրիացիներին:

Ուրոշ է, որ այս նոր թխուած «Հարաբայակին-Սլաւիան» այսինքն՝ այն պետութիւնը, որ պիտի կազմուի հարաբային ոլտուօններից և մտնի Աւստրիական կայսրութեան մէջ, ամբողջովին կախուած պիտի լինի Աւստրիայից: Այսպիսով ազատ ֆեղերացիայի փոխարէն պիտի ստացի մի խարէռաթիւն: Աւստրիայում առաջւայ նման կըկին պիտի իշխեն գերմանացիները, ոլտուօնների գրութիւնը ոչչովկ չպիտի բարուքի: Պիտի լինի նոյնը, ինչ որ Գերմանիայում, ուր ֆեղերացիայի քօղի տակ իշխուած են պրուսացիները:

Դրա հակառակը, եթէ Ռուսաստանին յաջողւէր ստեղծել «Բալկանեան ֆեղերացիա», Բալկանեան ազգերի գանակցութիւն, որ մօտ էր իրականալու 1912 թիւն, այն ժամանակ Ռուսաստանը՝ Ռումանիայի և Սերբիայի միջով ճանապարհ կունենար դէպի բաց, տաք ծովը և Կ-Պօլսի ու նեղուց-

Ների հարցը նրա համար կը կորցնէր
իր սրութիւնը:

Ինչպէս էլ որ լինի, ֆեղերացիան
Ռուսաստանում ապահովում է խաղա-
ղութիւնը Բալկաններում և արևմուտ-
քում՝ հանդիսանալով նաև միակ բա-
նալին Ռուսաստանի և իր արևմտեան
հարեւանների բարդ յարաբերութիւն-
ների լուծման։ Միայն ֆեղերացիան
կարող է ցրել Բալկանների՝ բոլոր ընդ-
հարումների և վէճերի այդ օջախի
խտացած մթնոլորտը։

Ֆեղերատիւ ռամկավար հանրապե-
տութիւնն. ահա կառավարութեան ան
միակ ձեզ, որ կտայ Ռուսաստանին
բարօրութիւն և խաղաղութիւն։

Առ այժմ չենք մտնում քննութեան
մէջ այն հարցի, որ քնականօրէն ըըշ-
խում է յիշեալ դրութիւնից, թէ ար-
դեօք ինչպիսի ֆեղերացիա պիտի լի-
նի Ռուսաստանում—ֆեղերացիա պի-
տուրինիների։ թէ ֆեղերացիա ժողո-
վուրդների (ցեղերի : — Ինչու—Ռուփ-
հետև միշտ չի կարելի ճիշտ և արդա-

րութեամբ ասել, թէ այս ինչ շրջանը
բնակւած է միայն այս ինչ ցեղով,
կարող են լինել շրջաններ խառն բնակ-
չութեամբ։ Որինակ, ինչպէս վարւես
Մերձբալտեան երկրի հանդէպ. էստո-
նական է նա, թէ գերմանական։ Դա
է պատճառը, որ ոմանք (օր. Աւստրիա-
յում առաջարկում հն հիմնել ինքնառ-
վարութիւն ոչ ըստ շրջանների, այլ
ըստ ժողովուրդների, անկախ այն բա-
նից, թէ որտեղ են վերջինները տեղաւոր-
ւած, երկրի որ մասն են բռնում։ Այս
սիստեմի գործադրութեան դէպքում
ամբողջ պետութիւնը կբաժանվի ոչ
թէ ինքնուրոյն պետութիւնների, այլ
զուտ վարչական նահանգների կամ
շրջանների, բոլորովին անկախ այն
բանից, թ ովէ այս կամ այն շրջանում
բնակւում։

Մենք չենք զրադւի այդ հարցի
քննութեամբ Նրան կը պատասխանի
ինքը կեանքը. նա կվճռի, թէ որն է
յարմարագոյնը — պետութիւնների՝ ֆե-
ղերացիան, թէ ժողովուրդների։ Կա-

բող է պատահել, որ մի դէպքում յարսմար կհամարւի մէկը, մի այլ դէպքում՝ միւսը և միենոյն պետութեան մէջ, մատամանակ գործնականում կկիրառուին երկու հղանակն էլ: Մեզ այժմ հետաքրքրում են ոչ թէ մասնաւոր խընդիրներ, այլ մի հիմնական դրութիւն, այն է՝ ինչպիսի հանրապետութիւն է հարկաւոր Ռուսաստանին-ֆեդերատիւ, թէ ունիտար:

Դատողութիւնն ու իրերի զրութիւնը մեզ բերում են այն եղբակացութեան, թէ Ռուսաստանում կարող է լինել միայն ֆեդերատիւ հանրապետութիւն: Սակայն կարող է պատահել, որ մեր բոլոր «խորիմաստ զատողութիւններից» աւելի պերճ խօսի ինքը կեանքը, որ կարողացաւ մինչև իսկ ալհոր հնութեան մէջ ստեղծել Աքէական դաշնակցութիւնը Յունաստանում: Ֆեդերալիզմի գմի գաղափարն այնուհետեւ խլացաւ, երբ թագաւորել սկսեց «երկաթեայ» Հոռմը, որն ամեն ինչ խորտակեց իր գինւորական թաթի ծանրութեան ներ-

քոյ: Յետոյ, Քամանակ առ Ժամանակ կազմւած դաշնակցութիւնները, ինչպէս օրինակ՝ Գերմանական ազգի, Արքազան Հոռմէական Կայսրութիւնը աւելի կամ պակաս չափով մօտենում են «Փեղերացիա» խօսրի ներկայ ըմբանումին, բայց իր խսկական իմաստով՝ Փեղերացիայի գաղտփարը գարգանալ սկսեց շատ աւելի ուշ, XIX դարում, իտալացինցանաւոր յեղակոլական Մաձինից սկսած: Եւ խօսքը մի անգամից գործի է փոխւում, մէկը միւսի յետեից ծլում են նոր-նոր ֆիդերացիաներ, իսկ հներն աւելի ամրապնդում և ընդգրածակւում են:

Ներկայումս մենք ունենք եօթ ֆեդերատիւ պետութիւն՝ Զելցերիա՝ Եւրոպայում, Միացեալ Նահանգները, Կանադա, Մեքսիկա, Բրազիլիա և Արգենտինա՝ երկու Ամերիկաներում և, վերջապէս, ամբողջ Աւստրալիան, որ իրը մի ամբողջական ֆեդերատիւ պետութիւն, մտնում է մեծ Բրիտանական պետական համակարգութեան մէջ:

Ֆեղերատիւ պետութիւնների թիւն
աճում է անսովոր արագութեամբ: Ֆե-
ղերալիզմի դաշտաբարների զօրեղ դար-
դացումը ֆրանսիայում, Անգլիայում և
մինչեւ անգամ Սովանիայում, ուր երա-
զում են Պօրտուգալիայի հետ միասին
կազմել մէկ միացեալ ֆեղերատիւ պե-
տութիւն «Իրերական հանրապետու-
թիւն» անունով—այս բոլորը պարզ
ապացուցանում են, որ ֆեղերալիզմն
իր մէջ ունի թարմ, երիտասարդ և
կենսական անապառ հիւթ: Ֆեղերալիզ-
մըն է ճանապարհը նոր պետութիւն-
ների առաջացման (Ամերիկայում) ինչ-
պէս և հին պետութիւնների բարենո-
րովման և բարեշնութեան (Եւրոպա-
յում և Զինաստանը՝ Ասիա ու ժ.):

Ոպագան ֆեղերալիզմինն է, որով
հետեւ ֆեղերալիզմը բոլոր ազգերի,
բոլոր ժողովուրդների ու ցեղերի խա-
ղաղ միացումն է, որովհետեւ միայն ֆե-
ղերալիզմի մէջ է միլիտարիզմի գերեղ-
մանը և ամբողջ աշխարհի խաղաղու-
թեան գրաւականը:

Միայն ֆեղեր լիզմի մէջ կդանի հա-
մաշխարհական պատերազմից յոզնած
մարդկութիւնն իր ազգային ինդիրների
արդար լուծումը, որի համար այնքան
մարդկական որբազան արիւն է թափ-
ւած, այնքան երիտասարդ, կենսունակ
և եռուն ուժեր են ընկած...

Եւ ապագան ցոյց կտայ, որ այդ
այլպէս է:



ԼՈՅԱ ԵՆ ՏԵՍԵԼ «ԱՇԽԱՏԱՀՈՐ»-Ի
ԳՐԱԴԱՐԱՆԻ ԳՐՔՈՅՑԿՆԵՐԸ



1. Ե. Բրեւկո. Մրեւեկովսկայա. — Ինչ
պէտք է անել Հիմնադր. Ժող. 5 կ.
2. Ա. Ա. Ռուբակին. — Հողի սեփակա
նութիւնը և համայնական սեփա-
կանութիւնը 10 կոպ.
3. Վ. Խորեկին — Ի՞նչ է սոցիալիզմը. 15 կ.
4. Ժ. Ժարե. — Խաղաղութեան գաղա-
փարը. գինն է 10 կոպ.
5. Վ. Խ. Շի. — Մեր ծրագիրը — Հայ Յ.
Դաշնակցութեան ծրագրի պարզ բա-
ցառութիւնը) — գինն է 20 կ.
6. Կարելինկ. — Նոր լեռան քարոզը,
թարգ. Տ. Յ. 10 կ.
7. Վ. Կիմելիմ Լիբկնիխս. — Սարգերը և
ճանձերը, գինն է 10 կ.
8. Լիբին. — Ի՞նչ է Հիմնադիր Ժաղովը
Ռուս. թարգ. օր. Լ. Յարութիւն-
նեան գինն է 10 կոպ.
9. Վ. Խորեկին. — Երբ և ի՞նչպէս պէտք
է լինի սոցիալիստական յեղափո-
խութիւնը գինն է 50.
10. Պ. Խուլեւիչ. — Աշխատաւորների
Միջազգային Միութիւնը (Թուսե-
րէնից փոխազդրեց Ռուսօն. գ. 20 կ.
11. Վ. Խորեկին. — Սոցիալիզմ և բա-
րոյականութիւն, գինն է 20 կ.:
12. Գ. Ն. Կրժենիցի. — Ի՞նչ է ֆեղե-
րատիւ հանրապետութիւնը, ուսա.
ազատ թարգ. իրազեկ գ. 20 կ.:

ՀՀ Ազգային գրադարան



NL0198636

